ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 03/2020

ԳԱԳԻԿ ԿՈԼՅԱՅԻ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 26 հոկտեմբերի, 2020 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով Գագիկ Կոլյայի Ծառուկյանի կողմից անհամատեղելիության կանոնների խախտման վերաբերյալ N 03/2020 վարույթի նյութերը.

պարզեց.

I. Նախապատմություն

1. 2020 թվականի հուլիսի 1-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետ Կ. Կարապետյանը էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության “Mulberry” համակարգի միջոցով Հանձնաժողովին հասցեագրել է դիմում:
2. Դիմումի մեջ ներկայացրել է տեղեկություն այն մասին, որ.
   1) 2020 թվականի հունիսի 24-ին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն է մուտքագրվել «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության ընդհանուր ժողովի՝ 2020 թվականի հունիսի 23-ի արձանագրությունը՝ ստորագրված Գագիկ Կոլյայի Ծառուկյանի կողմից, որով որոշվել է դադարեցնել ընկերության տնօրեն Սեդրակ Առուստամյանի լիազորությունները և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Արայիկ Կեսոյանին (որպես պատճառ նշված է Սեդրակ Առուստամյանի կողմից իր պարտականությունների կատարման ժամանակավոր անհնարինությունը):
   2) Էլեկտրոնային գրանցամատյանի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դեռևս 2018 թվականի հունվարի 22-ին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն էր ներկայացվել «ԿՈՏԱՅՔ» գարեջրի գործարան ՍՊ ընկերության մասնակցի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը, որով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ընկերության

կանոնադրության մեջ։ Նշված որոշումը ստորագրվել էր Գագիկ Կոլյայի Ծառուկյանի կողմից։

3. Դիմումատուն նշել է, որ վերոգրյալը վկայում է ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Կոլյայի Ծառուկյանի կողմից ՀՀ Սահմանադրության «Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունը» վերտառությամբ 95-րդ հոդվածի հնարավոր խախտման մասին և խնդրել է Հանձնաժողովին իր լիազորությունների շրջանակներում պարզել քննարկվող գործողություններում անհամատեղելիության պահանջի խախտման առկայությունը։
4. 2020 թվականի հուլիսի 6-ին Հանձնաժողովը կայացրել է 03/2020 որոշումը՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին։
5. 2020 թվականի հուլիսի 10-ին Հանձնաժողովը փոստային առաքմամբ որոշումն ուղարկել է Գագիկ Ծառուկյանին։
6. Վարույթի շրջանակներում Հանձնաժողովն ուսումնասիրել է Գագիկ Ծառուկյանի և իր ընտանիքի անդամների կողմից 2011-2019թթ. ժամանակաշրջանների համար ներկայացրած հայտարարագրերը և հայտարարագրված տվյալները համադրել ՀՀ իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրից ստացված տեղեկատվության հետ, ինչպես նաև՝ դիմումով բարձրացված՝ անհամատեղելիությանն առնչվող առերևույթ փաստերի հետ, այդ թվում՝ Գագիկ Ծառուկյանի մասնակցությամբ ընկերություններին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությամբ հնարավոր անհամատեղելիության փաստի առկայությունը ստուգելու նպատակով։
7. 2020 թվականի օգոստոսի 28-ին Հանձնաժողովը էլեկտրոնային տարբերակով Գագիկ Ծառուկյանին է ներկայացրել գրություն՝ առաջարկելով ներկայացնել պարզաբանում և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր հետևյալի վերաբերյալ.
   1) «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության, ինչպես նաև Գագիկ Ծառուկյանի մասնակցությամբ ընկերություններում գույքային իրավունքները Ս. Առուստամյանի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագիրը, ցանկացած փաստաթուղթ, որն առնչություն ունի իր մասնակցությամբ ընկերությունների բաժնեմասերի կառավարմանը, լիազորությունների փոխանցմանը հավատարմագրային կառավարչին։
   2) «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Ս. Առուստամյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը, գործառույթների շրջանակը սահմանող ակտեր, փաստաթղթեր, Ս. Առուստամյանի՝ որպես «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության հավատարմագրային կառավարչի կողմից կնքված բոլոր գործարքները, կայացված որոշումները։
8. 2020 թվականի սեպտեմբերի 14-ին Գագիկ Ծառուկյանի ներկայացուցիչ, փաստաբան Էմին Խաչատրյանը ներկայացրել է դիրքորոշում, ինչպես նաև փաստաթղթեր, մասնավորապես՝ «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության՝ 2008 թվականի մայիսի 5-ի նույն ընկերության միակ մասնակցի N 07/01 որոշմամբ հաստատված նոր խմբագրությամբ կանոնադրության պատճենը՝

ստորագրված Գագիկ Ծառուկյանի կողմից, «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության՝ 2018 թվականի մայիսի 16-ի նույն ընկերության միակ մասնակցի N 18/02-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության փոփոխության պատճենը՝ ստորագրված Սեդրակ Առուստամյանի կողմից, 2017 թվականի մայիսի 20-ին կառավարման հիմնադիր Գագիկ Ծառուկյանի և հավատարմագրային կառավարիչ Սեդրակ Առուստամյանի միջև կնքված բաժնետոմսերի և բաժնեմասերի հավատարմագրային կառավարման մասին պայմանագրի պատճենը (պայմանագրի 1.4. կետով սահմանված՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահին սեփականության իրավունքով հիմնադրին պատկանող բաժնեմասերի չափերի, առևտրային կազմակերպությունների անվանումների ու գտնվելու վայրերի վերաբերյալ հավելվածը չի ներկայացվել), 2018 թվականի հունվարի 12-ին Գագիկ Ծառուկյանի կողմից Սեդրակ Առուստամյանին տրված լիազորագրի պատճենը, 2002 թվականի դեկտեմբերի 27-ի N 1-Ա աշխատանքային պայամանագրի պատճենը «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Սեդրակ Առուստամյանի հետ՝ «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության կողմից՝ Գագիկ Ծառուկյանի ստորագրությամբ, Սեդրակ Առուստամյանի աշխատանքային պայմանագրի թվով երեք փոփոխությունների պատճենները՝ «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության կողմից՝ Գագիկ Ծառուկյանի ստորագրությամբ և «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության միակ մասնակցի երկու որոշման պատճենները՝ ստորագրված Սեդրակ Առուստամյանի կողմից։

9. 2020 թվականի սեպտեմբերի 25-ին Հանձնաժողովը տեղեկություն ստանալու համար աջակցության նպատակով դիմել է ՀՀ Կառավարությանը՝ խնդրելով տեղեկացնել, թե ինչ լիազորությունների շրջանակներում է Գագիկ Ծառուկյանը հանդիպել ՀՀ Վարչապետին՝ 2019 թվականի փետրվարի 21-ի ՀՀ Կառավարության N 112 – Ա որոշմամբ ՀՀ Կառավարության հավանությանն արժանացրած «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի շուրջ քննարկման համար։ Այդ նախագծով Կառավարությունը նպատակ էր հետապնդում ապահովել Հայաստանում արտադրվող ցեմենտի մրցունակությունը։

10. 2020 թվականի հոկտեմբերի 26-ի դրությամբ ՀՀ Կառավարությունը տեղեկություններ չի տրամադրել։

11. 2020 թվականի սեպտեմբերի 29-ին Հանձնաժողովը էլեկտրոնային տարբերակով Գագիկ Ծառուկյանին է ներկայացրել գրություն՝ առաջարկելով ներկայացնել պարզաբանում և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր հետևյալ հարցադրումների առնչությամբ.
    1) այն տեսանյութերի վերաբերյալ, որտեղ առերևույթ դրսևորվում է Գագիկ Ծառուկյանի ներգրավվածությունը վերջինիս կողմից հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունների գործադիր մարմինների տիրույթում գտնվող որոշումների կայացման գործընթացին,

2) ներկայացնել պարզաբանումներ, թե ինչ լիազորությունների շրջանակներում է Գագիկ Ծառուկյանը հանդես եկել բիզնես գործունեության և ներդրումների վերաբերյալ բանակցություններում և քննարկումներում,
3) պարզաբանել, թե գույքի հավատարմագրային կառավարումը հավատարմագրային կառավարչի կողմից անձամբ իրականացնելու անհնարինության պարագայում ինչպես են իրականացվում 2017 թվականի մայիսի 20-ին կառավարման հիմնադիր Գագիկ Ծառուկյանի և հավատարմագրային կառավարիչ Սեդրակ Առուստամյանի միջև կնքված բաժնետոմսերի և բաժնեմասերի հավատարմագրային կառավարման մասին պայմանագրով սահմանված նրա պարտավորությունները,
4) պարզաբանել, թե արդյո՞ք դիտարկվել են գույքի հավատարմագրային կառավարումը հավատարմագրային կառավարչի կողմից անձամբ իրականացնելու անհնարինությամբ պայմանավորված ի հայտ եկած խնդիրների լուծման այլ տարբերակներ:

12. 2020 թվականի հոկտեմբերի 2-ին Գագիկ Կոլյայի Ծառուկյանի փաստաբան Էմին Պերճի Խաչատրյանը դիմում է ներկայացրել Հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել ողջամիտ ժամկետ՝ ևս 10 օր՝ բարձրացված հարցերին սպառիչ պատասխան տալու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գագիկ Ծառուկյանը գտնվում է անազատության մեջ:
13. Հաշվի առնելով ներկայացրած դիմումը և հիմնվելով ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի վրա՝ Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 5-ին N 03-1/2020 որոշմամբ վարույթի ժամկետը երկարացրել է 10 օր ժամկետով՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 15-ը և այդ մասին տեղեկացրել է դիմումատուին:
14. 2020 թվականի հոկտեմբերի 12-ին Էմին Խաչատրյանը նորից գրությամբ դիմել է Հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել ողջամիտ ժամկետ՝ ևս 20 օր՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 5-ը:
15. Հաշվի առնելով ներկայացրած դիմումը և հիմնվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի վրա՝ Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 15-ին N 03-2/2020 որոշմամբ վարույթի ժամկետը երկարացրել է ևս 10 օր ժամկետով՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 25-ը և այդ մասին տեղեկացրել է դիմումատուին:
16. 2020 հոկտեմբերի 26-ին Հանձնաժողովն էլեկտրոնային տարբերակով ստացել է Գագիկ Կոլյայի Ծառուկյանի փաստաբան Էմին Պերճի Խաչատրյանի գրությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումն ու պարզաբանումները

2020 թվականի օգոստոսի 28-ին և 2020 թվականի սեպտեմբերի 29-ին Հանձնաժողովի կողմից Գագիկ Ծառուկյանին ներկայացրած գրություններին ի պատասխան Գագիկ Ծառուկյանն իր ներկայացուցիչ, փաստաբան Էմին Խաչատրյանի միջոցով ներկայացրել է դիրքորոշում հետևյալ հիմնավորումներով.

17. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնի նշանակվելուց հետո մեկ ամսվա ընթացքում կարող է իր բաժնեմասը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում հավատարմագրային կառավարման հանձնելուն զուգահեռ նշանակել նաև գործադիր մարմնի ղեկավար , ինչը չի կարող դիտարկվել որպես պաշտոնի անհամատեղելիության պահանջների խախտում, քանզի դրանով նա չի մասնակցել ընկերության կառավարմանը, չի որոշել ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը, չի փոփոխել ընկերության կանոնադրության և ընկերության կանոնադրական կապիտալի չափը, չի հաստատել տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, չի բաշխել ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև, չի ընդունել ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթեր, և այլ հարցեր, որոնք ուղղակիորեն վերաբերում են ընկերության կառավարմանը: Ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելը՝ զուտ ընկերության գործադիր մարմնի ղեկավար նշանակելու հարցի քննարկման համար, չի կարող դիտարկվել որպես պաշտոնի անհամատեղելիության պահանջների խախտում, հատկապես այն դեպքում, երբ ընկերության հավատարմագրային կառավարիչը եղել է նաև ընկերության գործադիր մարմնի ղեկավար և օբյեկտիվորեն զրկված է եղել իր պարտականությունները կատարելու հնարավորությունից, որպիսի պայմաններում ընկերության նոր գործադիր մարմնի ղեկավար նշանակելը չի կարող դիտվել որպես ընկերության կառավարմանը մասնակցել: Ավելին, տվյալ դեպքում, երբ դադարեցված չէր հավատարմագրային կառավարչի լիազորությունները, իսկ վերջինս օբյեկտիվորեն զրկված էր իր պարտականությունները կատարելու հնարավորությունից, որևէ այլ անձ իրավասու չէր նշանակել ընկերության գործադիր տնօրեն, իսկ գործադիր տնօրեն չնշանակվելու դեպքում ընկերությունը կարող էր հայտնվել մի իրավիճակում, երբ զրկված կլիներ հարկային հաշվետվություններ ներկայացնելու, հարկեր վճարելու, աշխատողներին աշխատավարձ վճարելու հնարավորությունից, որպիսի հանգամանքներն էական վնաս կպատճառեին ինչպես պետությանը, այնպես էլ ընկերության աշխատակիցներին ու հնարավոր այլ անձանց (2020 թվականի սեպտեմբերի 14-ին ներկայացված դիրքորոշում):
18. Համացանցում առկա տեսանյութերի առնչությամբ վարույթի մասնակիցը ներկայացրել է, որ այդ տեսանյութերի ուսումնասիրությունը որևէ կերպ չի փաստարկում Գագիկ Ծառուկյանի ներգրավվածությունը հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունների գործադիր մարմինների տիրույթում գտնվող որոշումների կայացման գործընթացին: Մասնավորապես, ներկայացված հարցադրումներին ի պատասխան Գ. Ծառուկյանի ներկայացուցիչը հայտնել է, որ «Մարդ որը կառուցում է» ֆիլմի առաջին հատվածում Գագիկ Ծառուկյանը ոչ թե որոշում և սահմանում է խաղողի մթերման գինը, այլ, տեղեկանալով խաղողի մթերման ցածր սակագնի մասին՝ պատրաստակամություն է հայտնել անգամ սեփական ակնկալվող եկամտի մի մասից հրաժարվելու պայմանով՝ առաջարկել կառավարիչներին սահմանել խաղողի մթերման բարձր սակագին: Մյուս տեսանյութերում ներկայացված

դրվագները նույնպես հանդիսանում են առաջարկներ կառավարիչներին, կրում են լոկ խորհրդատվական բնույթ և չեն կարող մեկնաբանվել որպես ներգրավվածություն ընկերությունների կառավարման գործընթացներին: Ի պատասխան հանձնաժողովի հարցադրման, որ «Արարատ ցեմենտ» փակ բաժնետիրական ընկերություն կատարած այցելության մասին պատմող տեսանյութում Գագիկ Ծառուկյանը խոսում է ընկերության ընթացիկ կառավարմանը վերաբերող հետագա աշխատանքներից և թանկարժեք նվերներ նվիրում գործարանի երկարամյա աշխատակիցներին, ներկայացվել է դիրքորոշում, որ Գագիկ Ծառուկյանը «Արարատ ցեմենտ» գործարանի աշխատակիցներին թանկարժեք նվերներ հանձնել է բացառապես իր անձնական միջոցների հաշվին՝ որպես բարի կամքի դրսևորում, ճիշտ այնպես, երբ տարատեսակ նվերներ է հանձնում, օրինակ, արվեստի, մշակույթի գործիչներին, որոնք որևէ առնչություն չունեն «Մուլտի գրուպ» կոնցեռնի հետ: Նա նաև նշել է, որ Գագիկ Ծառուկյանն այցելել է Տավուշի մարզ և հանդիպել է խաղողագործներին որպես «Մուլտի գրուպ» կոնցեռնի հիմնադիր: Գագիկ Ծառուկյանը, հանդիսանալով պատգամավոր, ինչպես նաև ընկերությունների մասնակից և ստանալով եկամուտ այդ ընկերություններից, ականջալուր է եղել ժողովրդի խնդիրներին և իր սպասվելիք անձնական շահույթի նվազեցման հաշվին (հնչեցնելով խաղողի մթերման գինը) օգնել է ժողովրդին, որպեսզի չսննկանան և շարունակեն գյուղատնտեսական իրենց գործունեությունը, ինչը չի կարող մեկնաբանվել որպես Գագիկ Ծառուկյանի ներգրավվածություն բիզնեսի կառավարման մեջ:

Ի պատասխան հանձնաժողովի այն հարցադրմանը, թե իր ո՞ր լիազորությունների շրջանակներում է Գագիկ Ծառուկյանը հանդիպում իր գործընկեր տարբեր գործարարների ու ներդրողների հետ, նրանց հետ քննարկում գործարար ծրագրեր, այդ թվում՝ համատեղ բիզնեսի զարգացման հիմնական ուղղությունները, ընկերություններ հիմնադրելու և դրանց մասնակցելու, ինչպես նաև բիզնեսին առնչվող այլ հարցեր, փաստաբանը նշել է, որ որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ աշխարհի տարբեր երկրներից շատ ներդրողներ գալիս են Հայաստան ներդրումներ կատարելու՝ հաշվի առնելով հենց Գագիկ Ծառուկյանի հեղինակությունը և նրա հանդեպ ունեցած անձնական վստահությունը, և ամենևին զարմանալի չէ, որ Գագիկ Ծառուկյանը հանդիպումներ է ունենում նրանց հետ՝ ներդրումային միջավայրը ներկայացնելու և տնտեսության զարգացման նպատակով հնարավոր ներդրումներ ներգրավելու համար: Ինչ վերաբերում է տարբեր գործարանների կառուցման, սակագների սահմանման վերաբերյալ պայմանավորվածություններին, ապա դրանք երկուստեք ձեռք են բերվել կառավարիչների կողմից:

Մյուս հարցադրումների առնչությամբ պարզաբանումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել՝ խնդրելով հիմք ընդունել նախորդ գրության մեջ ներկայացված դիրքորոշումները: Մասնավորապես, որևէ պարզաբանում չի տրվել Հանձնաժողովի գրությամբ բարձրացված հետևյալ հարցերին՝

1) 2017թ մայիսի 20-ի հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքումից ի վեր Գագիկ Ծառուկյանը մասնակցել է իր մասնակցությամբ ընկերությունների ընդհանուր ժողովների որոշումների կայացմանը

առնվազն 14 անգամ, որից 11-ը վերաբերվում է նոր հիմնադրվող ընկերություններին, 3-ը՝ գործող ընկերություններին (այդ թվում՝ ընկերության գործադիր մարմնի ղեկավարին ազատելու, տնօրենի նշանակման և ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելուն, ինչը, համաձայն պայմանագրի, գտնվում է բացառապես հավատարմագրային կառավարչի իրավասությունների տիրույթում)։ Գագիկ Ծառուկյանի մասնակցությամբ ընկերությունների ընդհանուր ժողովի որոշումների կայացմանն անձամբ մասնակցելու դեպքեր արձանագրվել են նաև նախկինում՝ մինչև Պայմանագրի կնքումը՝ ՀՀ ԱԺ տարբեր գումարումների պատգամավոր հանդիսանալու ժամանակահատվածում։ 14.09.2020թ Հանձնաժողովին հասցեագրված գրության 17-րդ կետում Գագիկ Ծառուկյանը և փաստաբան Էմին Խաչատրանը նշել են հավատարմագրային կառավարչի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության մասին։ Չնայած նրան, որ պայմանագրով սահմանված են եղել համապատասխան դրույթներ, այնուամենայնիվ, գույքի հավատարմագրային կառավարումը հավատարմագրային կառավարչի կողմից անձամբ իրականացվելու անհնարինության պարագայում Գ.Ծառուկյանը միակողմանի չի լուծել պայմանագիրը և մասնակցել է հավատարմագրային կառավարման ներքո գտնվող իր մասնակցությամբ ընկերությունների՝ մասնակիցների ընդհանուր ժողովների իրավասության տիրույթում գտնվող որոշումների կայացմանը։

2) Մինչ գույքի հավատարմագրային կառավարումը հավատարմագրային կառավարչի կողմից անձամբ իրականացվելու անհնարինության ի հայտ գալը իր ո՞ր լիազորությունների շրջանակներում է Գագիկ Ծառուկյանը մասնակցել հավատարմագրային կառավարման հանձնված իր մասնակցությամբ ընկերությունների մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումների կայացմանը։
3) Գույքի հավատարմագրային կառավարումը հավատարմագրային կառավարչի կողմից անձամբ իրականացվելու անհնարինության պարագայում ինչպե՞ս են մինչ օրս իրականացվում Պայմանագրով սահմանված նրա մյուս պարտավորությունները։
4) Արդյո՞ք Գագիկ Ծառուկյանի կողմից դիտարկվել են գույքի հավատարմագրային կառավարումը հավատարմագրային կառավարչի կողմից անձամբ իրականացնելու անհնարինությամբ պայմանավորված ի հայտ եկած խնդիրների լուծման այլ տարբերակներ։

III. Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վարույթի շրջանակներում պարզված տեղեկություններ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից, տվյալների շտեմարաններից, վարույթի մասնակցից ստացված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

19. 2012 թվականի դեկտեմբերի 28-ին կնքվել է N 1-Ա աշխատանքային պայմանագիր՝ 2002 թվականի դեկտեմբերի 27-ին «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Սեդրակ Առուստամյանի հետ կնքված N1-Ա աշխատանքային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին: Պայմանագիրը գործատուի կողմից ստորագրել է Գագիկ Ծառուկյանը:
20. 2013 թվականի օգոստոսի 30-ին կնքվել է N 35-Ա աշխատանքային պայմանագիրը՝ 2002 թվականի դեկտեմբերի 27-ին «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Սեդրակ Առուստամյանի հետ կնքված N1-Ա աշխատանքային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին: Պայմանագիրը գործատուի կողմից ստորագրել է Գագիկ Ծառուկյանը:
21. 2020 թվականի փետրվարի 28-ին կնքվել է N 01/03-Ա աշխատանքային պայմանագիր՝ 2002 թվականի դեկտեմբերի 27-ին «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Սեդրակ Առուստամյանի հետ կնքված N1-Ա աշխատանքային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին: Պայմանագիրը գործատուի կողմից ստորագրել է Գագիկ Ծառուկյանը:
22. 2018 թվականի հունվարի 16-ին «ԿՈՏԱՅՔ» Գարեջրի գործարան ՍՊ ընկերության միակ մասնակցի որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «ԿՈՏԱՅՔ» Գարեջրի Գործարան ՍՊ ընկերության կանոնադրության մեջ: Որոշումը ստորագրված է նույն ՍՊ ընկերության միակ մասնակից Գագիկ Կոլյայի Ծառուկյանի կողմից:
23. 2020 թվականի հունիսի 23-ին կայացել է «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊ ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը, որին մասնակցել են ընկերության մասնակիցներ Գագիկ Ծառուկյանը և Սամվել Ծառուկյանը: Ընդհանուր ժողովը որոշել է Սեդրակ Առուստամյանին ազատել «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊ ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնից և գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Արայիկ Կեսոյանին: Ժողովի արձանագրության տակ որպես ժողովի նախագահ ստորագրել է Գագիկ Ծառուկյանը:
24. 2020 թվականի հուլիսի 2-ին տեղի է ունեցել «Մուլտի Ավտոտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը, որին մասնակցել են Գագիկ Կոլյայի Ծառուկյանը (բաժնեմասի չափը 90%) և Ջավահիր Ռաֆիկի Ծառուկյանը (բաժնեմասի չափը 10%): Ժողովը նախագահել է Գագիկ Ծառուկյանը, ով առաջարկել է Արթուր Ավետիսյանին ազատել ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնից և ընկերության գլխավոր տնօրեն նշանակել Հովհաննես Պողոսյանին: Ժողովի արձանագրության տակ որպես ժողովի նախագահ ստորագրել է Գագիկ Ծառուկյանը:
25. 2017 թվականի մայիսի 20-ին Գագիկ Ծառուկյանի և Սեդրակ Առուստամյանի միջև կնքվել է բաժնետոմսերի և բաժնեմասերի հավատարմագրային կառավարման մասին պայմանագիր, որով, հաշվի առնելով, որ ՀՀ ԱԺ պատգամավոր հանդիսացող Հիմնադրին սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում ստեղծված առևտրային կազմակերպությունների բաժնետոմսեր և կանոնադրական կապիտալներում բաժնեմասեր, Հիմնադիրն ամբողջությամբ հավատարմագրային կառավարման է հանձնել առևտրային

կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսերն ու բաժնեմասերը, իսկ հավատարմագրային կառավարիչը պարտավորվել է հիմնադրից ընդունել և պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացնել հիմնադրին սեփականության իրավունքով պատկանող՝ ընկերությունների բաժնեմասերով հավաստված իրավունքները, մասնավորապես.

1) Ընկերության կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարումը, ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2) Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
3) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
4) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
5) Ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամ դադարեցումը,
6) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և շահութաբաժինների չափի հաստատումը,
7) Ընկերության խոշոր ֆինանսատնտեսական գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը,
8) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
9) Հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների և այլ միություններում մասնակցությունը,
10) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,
11) Ընկերության Կանոնադրությամբ բաժնետերերի/մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված այլ հարցերը,
12) Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն ստանալու, այդ թվում՝ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը ծանոթանալու իրավունքը,
13) Ընկերության լուծարման դեպքում Ընկերության գույքի՝ Հիմնադրին հասանելիք մասը՝ Կողմերի համաձայնեցրած պայմաններով հավատարմագրային կառավարմանը ստանալու իրավունքը,
14) «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքներին, ընկերությունների կանոնադրություններին համապատասխան Ընկերության բաժնեմասերով հավաստվող այլ իրավունքները, ինչպես նաև սույն Պայմանագրով ուղղակիորեն նախատեսված այլ իրավունքներ։

26. Պայմանագրով սահմանվել է, որ պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո հիմնադրի անվամբ ձեռքբերված բաժնեմասերը ևս համարվում են

հավատարմագրային կառավարման հանձնված՝ դրանց նկատմամբ հիմնադրի սեփականության իրավունքը ծագելու պահից։

27. Պայմանագրով սահմանվել են նաև այն գործողությունները, որոնք Հավատարմագրային կառավարիչն իրավունք ունի կատարել միայն Հիմնադրի համաձայնությամբ.
    1) Ընկերության վերակազմակերպումը,
    2) Ընկերության լուծարումը,
    3) Ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, Ընկերության լուծարային հանձնաժողովի նշանակումը,
    4) Ընկերության հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
    5) Ցանկացած ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը,
    6) Ընկերության բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը։
28. Պայմանագրով սահմանվել է նաև, որ հետևյալ իրավունքները հավատարմագրային կառավարչի կողմից իրականացվում են հիմնադրի հետ համաձայնեցմամբ.
    1) Ընկերության կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարումը, ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
    2) Ընկերության խոշոր ֆինանսատնտեսական գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը։
29. Պայմանագրով սահմանվել է նաև, որ պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում հիմնադիրը պարտավոր է զերծ մնալ գույքի նկատմամբ ցանկացած գործողություններից, որոնց կատարումը մտնում է հավատարմագրային կառավարչի իրավասության մեջ։
30. Պայմանագրով սահմանվել է, որ պայմանագրի կողմերից մեկի՝ դրա կատարումից հրաժարմամբ՝ հավատարմագրային կառավարչի կողմից գույքի հավատարմագրային կառավարումն անձամբ իրականացնելու անհնարինության դեպքում՝ պայմանագրի դադարեցման նախաձեռնող կողմի՝ պայմանագիրը դադարեցվելուց մեկ ամիս առաջ մյուս կողմին ներկայացված ծանուցման առկայության պարագայում պայմանագիրը կարող է դադարել։

<u>Պատգամավորական գործունեությանն առնչվող տեղեկություններ</u>

Սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում դիտարկել որպես պատգամավոր Գագիկ Ծառուկյանի ամբողջ գործունեությունը։

31. Գագիկ Ծառուկյանը պատգամավոր է դարձել 2003 թվականի մայիսի 25-ին տեղի ունեցած ՀՀ երրորդ գումարման Ազգային Ժողովի ընտրությունների արդյունքում՝ ընտրվելով որպես անկախ պատգամավոր։
32. 2004 թվականին հիմնադրել է «Բարգավաճ Հայաստան» Կուսակցությունը և հանդես է եկել որպես կուսակցության հիմնադիր և նախագահ։

33. 2004-2018 թվականներին Գագիկ Ծառուկյանը վերընտրվել է որպես ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր։
34. 2015-2017 թվականներին Գագիկ Ծառուկյանը վայր է դրել կուսակցության նախագահի և խմբակցության ղեկավարի լիազորությունները։
35. 2012-2020 թվականների պատգամավորական գործունեության ընթացքում կայացած 2014 քվեարկություններից 1650-ի ժամանակ (ընդհանուր քվեարկության 82%) Գագիկ Ծառուկյանը բացակայել է։ Ընդ որում, ԱԺ յոթերորդ գումարման ընդհանուր թվով 819 քվեարկություններից Գագիկ Ծառուկյանը բացակա է եղել 493 քվեարկությանը (ընդհանուր քվեարկությունների 60%) (տվյալները՝ parliamentmontoring.am կայքի)։

<u>Առևտրային ընկերություններում բաժնեմասնակցությանն առնչվող տեղեկություններ</u>

36. 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է Գագիկ Ծառուկյանի մասնակցությամբ 54 ընկերություն։ Նրա կողմից վերահսկվող ընկերություններից 13-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցված խոշոր հարկատուներ են, որոնց վճարած հարկերը և այլ վճարները 2019 թվականի համար կազմել են ավելի քան 16 մլրդ ՀՀ դրամ։
37. 2003 թվականին՝ պատգամավորի պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ, նշված 54 ընկերություններից Գագիկ Ծառուկյանը մասնակցություն է ունեցել ընդամենը հինգ ընկերություններում (ըստ 2019 թվականի տարեկան հայտարարագրի տվյալների)։
38. 2012թ պաշտոնի ստանձնման հայտարարագրում Գագիկ Ծառուկյանի բաժնեմասնակցությամբ ընկերությունների թիվը կազմել է 33, որը 2019 թվականի տարեվերջին ավելացել է 21-ով և կազմել է 54։ Ընդ որում, 2011-2019 թվականների ընթացքում տեղի է ունեցել արժեթղթերի (բաժնեմասնակցության) ձեռքբերման (այդ թվում՝ հիմնադրման) առնվազն 53 և օտարման 18 գործարք։
39. 2011 թվականին Գագիկ Ծառուկյանի ստացած եկամուտը շահաբաժինների գծով կազմել է 1,403,337,436.0 ՀՀ դրամ, իսկ 2019 թվականին՝ 2,807,937,697.0 ՀՀ դրամ[1]։ Տոկոսային աճը կազմել է 200.1%։ Գագիկ Ծառուկյանի ստացած ընդհանուր եկամուտներն իր մասնակցությամբ ընկերություններից (շահաբաժինները, ընկերություններին տրված փոխառություններից ստացված տոկոսները և ընկերություններից ստացված վարձակալական վճարները՝ միասին վերցրած) կազմել են 2011 թվականին՝ 1,414,020,769.0 ՀՀ դրամ, իսկ 2019 թվականին՝ 3,922,115,633.0 ՀՀ դրամ։ Տոկոսային աճը կազմել է 277.4%։

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

40. 2017 թվականի մայիսի 20-ին Գագիկ Ծառուկյանի և Սեդրակ Առուստամյանի միջև կնքվել է բաժնետոմսերի և բաժնեմասերի հավատարմագրային կառավարման մասին պայմանագիր։
41. 2020 թվականի հունիսի 23-ին կայացել է «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը, որին մասնակցել են

[1] Արտարժույթով արտահայտված եկամուտները արտացոլվել են ՀՀ դրամով՝ օգտագործելով տվյալ տարվա միջին փոխարժեքը։

ընկերության մասնակիցներ Գագիկ Ծառուկյանը և Սամվել Ծառուկյանը։ Ընդհանուր ժողովը որոշել է Սեդրակ Առուստամյանին ազատել «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ գլխավոր տնօրենի պաշտոնից և գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Արայիկ Կեսոյանին։ Ժողովի արձանագրության տակ որպես ժողովի նախագահ ստորագրել է Գագիկ Ծառուկյանը։

42. 2020 թվականի հուլիսի 2-ին տեղի է ունեցել «Մուլտի Ավտոտրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը, որին մասնակցել են Գագիկ Կոլյայի Ծառուկյանը (բաժնեմասի չափը 90%) և Ջավահիր Ռաֆիկի Ծառուկյանը (բաժնեմասի չափը 10%)։ Ժողովը նախագահել է Գագիկ Ծառուկյանը, ով առաջարկել է Արթուր Ավետիսյանին ազատել ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնից և ընկերության գլխավոր տնօրեն նշանակել Հովհաննես Պողոսյանին։ Ժողովի արձանագրության տակ որպես ժողովի նախագահ ստորագրել է Գագիկ Ծառուկյանը։

V. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող կանոններ

43. Անդրադառնալով պետական, այդ թվում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության կանոնին՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) անդրադարձել է ընտրովի մարմինների հիմնական գործառույթներին՝ սահմանելով հետևյալը (CDL-AD(2012)027rev, կետ 34)։
Ընտրովի մարմինների հիմնական գործառույթներն են.
    - Ծառայել որպես պետական կառավարման ինստիտուտների ներկայացուցիչ,
    - Սահմանել հանրային քաղաքականության հիմնական ուղղությունները,
    - Որպես կամուրջ ծառայել քաղաքացիների և պետական կառավարման համակարգի միջև։
44. Ի հավելումն ընդհանրացված այս գործառույթների, Վենետիկի հանձնաժողովը հատուկ սահմանել է նաև խորհրդարանական ընդդիմության համար պատգամավորական մանդատից բխող հետևյալ հիմնական գործառույթները (CDL-AD(2010)025, կետ 25).
    - Կառավարության առաջարկած քաղաքականությանն այլընտրանք ներկայացնելը,
    - Իր ընտրողների շահերը ներկայացնելը,
    - Խորհրդարանի որոշումների կայացման գործընթացի խթանումը ներկայացվող առաջարկներին առարկություններ ներկայացնելու և արձագանքների միջոցով,
    - Կառավարության բյուջետային և օրենսդրական առաջարկների ուսումնասիրությունը,
    - Կառավարության գործունեության վերահսկումը,
    - Քաղաքական լեգիտիմությանը, հաշվետվողականությանը, թափանցիկությանը և կայունությանը նպաստելը,

- և այլն։

Այսինքն՝ պատգամավորական մանդատից բխող գործողությունների հիմնական առանցքը հանրային շահն է։ Նման գործառույթի անաչառ, անկախ, առանց որևէ խոչընդոտների և ճնշումների իրականացումն ապահովելու համար պատգամավորն օժտված է համապատասխան լիազորություններով, պաշտպանության անպիսի երաշխիքներով, ինչպիսին է պատգամավորական անձեռնմխելիությունը, ինչպես նաև՝ առաջադրվող սահմանափակումներով, որոնք էական նշանակություն ունեն քաղաքական պատասխանատվությունը խթանելու համար։ Այլ տեսակի գործունեությամբ զբաղվելու և այլ պարտավորություններ ունենալու պարագայում, երբ առաջանում է նաև մասնավոր շահ, ձևավորվում է մի այնպիսի իրավիճակ, երբ անձը պետք է ընտրություն կատարի և նախապատվություն տա իր անձնական շահին կամ հանրային շահին։ Եթե այլ իրավարահարաբերություններում նման երկակի պարտավորությունների առկայությունը խնդիրներ գուցե չի առաջացնում, ապա պետական պաշտոն զբաղեցնող անձանց պարագայում այն դառնում է վճռորոշ։ Հանրային շահին ծառայող իր պարտավորությունների իրականացման ցանկացած համատեղելիություն կարող է հանգեցնել պաշտոնատար անձի կողմից զբաղեցրած պաշտոնի հիմքով տրված լիազորությունների չարաշահման ռիսկի։

45. Այս պատճառով է, որ պաշտոնատար անձանց առաջադրվող հիմնական ելակետային կանոնը պետական պաշտոնին զուգահեռ համատեղելիությամբ այլ պաշտոն զբաղեցնելու կամ այլ գործունեությամբ զբաղվելու արգելքն է։ Մասնավորապես՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից։ (Հանրային ծառության մասին ՀՀ օրենք, Հոդված 31)

46. Այլ պաշտոններ զբաղեցնելու կամ այլ տեսակի գործունեությամբ զբաղվելու արգելքը հիմնականում հետապնդում է հետևյալ նպատակները.
    - օժանդակել իշխանությունների տարանջատման և հավասարակշռման (փոխզսպման) սկզբունքի պահպանմանը,
    - չեզոքացնել և կանխել մասնավոր գործունեությունից կամ պետական պաշտոնից բխող ազեցությունը պաշտոնեական՝ հիմնական գործառույթի և դերի իրականացման վրա։ Այլ կերպ՝ պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից որոշումների կայացման անաչառության վրա ցանկացած հնարավոր ազդեցություն, ներառյալ նաև՝ առկա այլ շահի կամ այլ պարտավորությամբ պայմանավորված ճնշումները և անհարկի այլ ազդեցությունները,
    - կանխարգելել պետական պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի այնպիսի դրսևորումը, երբ մասնավոր շահը հնարավոր կլինի գերադասել հանրային շահից,

- ապահովել, որ պատգամավորները բավարար ժամանակ ունենան իրենց հիմնական գործառույթը պատշաճ իրականացնելու համար (CDL-AD(2012)027rev, կետ 85),
- կանխել քաղաքականության և բիզնեսի սերտաճման միտումները և նման սերտաճման միջոցով՝ իշխանության վրա ճնշումների և անհարկի այլ ազդեցությունների դրսևորումը։

47. Անհամատեղելիության նման կանոնների բացակայության կամ դրանց անարդյունավետ կիրառման հետևանքով աստիճանաբար զարգանում է այն միտումը, որ ձևավորվում են ֆինանսական մեծ կարողություն ունեցող անձնական (կորպորատիվ) շահեր սպասարկող գործարարներ (գործարարների խմբեր) և հովանավորչական ցանցեր, որոնց գործունեությունը դուրս է գալիս գործարարության սահմաններից և սերտաճում է քաղաքական գործունեության հետ (oligarch) (H. Hale 2014, Patronal Politics: Eurasian Regime Dynamics In Comparative Perspective (Problems of International Politics)։ Փաստացի անձը ստանձնում է երկակի պարտավորություն (պատասխանատվություն)՝ որպես քաղաքական գործիչ կամ պետական պաշտոն զբաղեցնող անձ և որպես գործարար։ Նման դերերի համատեղելիությունը հանդիսանում է շահավետ գործարք, քանի որ բիզնեսը բարենպաստ ազդեցություն է կրում պետական պաշտոնից (քաղաքական որոշումներից) և հակառակը, քաղաքական իշխանության երկարակեցության և շարունակական վերարտադրության համար օգտագործվում է տնտեսական (բիզնես) գործունեությամբ ստացված առավելությունը։ Նման իրավիճակում հիմնական նպատակ և շահ է հանդիսանում ձևավորված ցանցի միջոցով սեփական բիզնես և քաղաքական ազդեցության և առավելության ապահովումը։ Այս սխեմայի միջոցով միաժամանակ հնարավոր է դառնում հեշտությամբ վերահսկել և կառավարել քաղաքական գործընթացները։ Բիզնես գործունեությունն ու դրա դեմ իրականացվող հնարավոր գործողությունները դառնում են քաղաքական որոշումների զսպման և գործողությունների ճնշման միջոց։ Նման կերպ գործող իշխանության պայմաններում թեև շարունակում են գործել պետական կառավարման ֆորմալ ինստիտուտներ, օրենքներ, այնուամենայնիվ, դրանք կիրառվում են ընտրողաբար կամ չեն կիրառվում։ Աստիճանաբար պետական կառավարման համակարգը հեռանում է տնտեսական մրցակցության, հավասարության և իրավունքի գերակայության սկզբունքներից, ընկղմվում է քաղաքական կոռուպցիայի մեջ։

48. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատգամավորին արգելվել է զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից Սահմանադրություն 1995 թվականի խմբագրությամբ (Հոդված 65)։ 2005 թվականի Սահմանադրական փոփոխություններով այս դրույթին ավելացել է նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը (Սահմանադրություն 2005 թվականի խմբագրությամբ, Հոդված 65)։ Ըստ էության, որդեգրվել է նաև այն մոտեցումը, որ պատգամավորի նկատմամբ գործունեության անհամատեղելիության պահանջն ավելի խիստ է, քան մյուս պաշտոնատար անձանց նկատմամբ։ Նման սահմանափակումները Հայաստանի Հանրապետությունում ներդրվել են՝ նպատակ ունենալով

ապահովել պատգամավորի լիազորությունների արդյունավետ կատարումը՝ կանխելով այլ խնդիրներով զբաղվելու վերջինիս հակվածությունը: Նման կարգավորմամբ հիմքեր ձևավորվեցին Ազգային ժողովը պրոֆեսիոնալ դարձնելու և գործարարությամբ զբաղվածների մուտքը Ազգային ժողով սահմանափակելու համար:

Հիմնական շարժառիթն այն էր, որ գործարարությամբ զբաղվելիս պատգամավորը կարող է չարաշահել իր կարգավիճակը՝ իր տնտեսական գործունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: Պաշտոն զբաղեցնելով այլ մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում՝ պատգամավորը կարող է հանդես բերել անձնական կամ կորպորատիվ շահագրգռություն՝ արտահայտելով տվյալ կազմակերպության շահերը, բայց ոչ ընտրողների ընդհանուր կամքն ու ցանկությունները (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010):

VI. Ներպետական օրենսդրական կարգավորումները

49. ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:
50. Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ Սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների կատարումը սահմանվել է որպես պատգամավորի պարտականություն:
51. 2011 թվականին ընդունված Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի (ՀՕ-172-Ն) 23-24-րդ հոդվածների համաձայն՝ հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի համար սահմանվել է արգելք անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար: Ըստ վերոնշյալ իրավակարգավորումների հանրային ծառայողը պարտավոր է հանրային ծառայության նշանակվելուց հետո առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 եւ ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում այն հանձնել հավատարմագրային կառավարման:
52. 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ է մտել Հանրային ծառայության մասին ՀՀ նոր օրենքը (ՀՕ-206-Ն), որի 31-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց (այդ թվում նաև՝ Ազգային ժողովի պատգամավորներին) արգելվում է զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: 2018թ մարտի 23-ին ընդունված Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանվել է նաև, որ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.
2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.
3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.
4) 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:
Նույն օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանվել է, որ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունեցող անձինք պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո մեկ ամսվա ընթացքում պարտավոր են այն հանձնել հավատարմագրային կառավարման:

53. Քաղաքացիական օրենսգրքի 954-րդ հոդվածի համաձայն՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի): Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում հավատարմագրային կառավարչին դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման:

54. Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ընկերության բարձրագույն մարմին է հանդիսանում ընդհանուր ժողովը: Նույն օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ մեկ մասնակից ունեցող ընկերությունում ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ կարող են ընդունվել ընկերության միակ մասնակցի գրավոր որոշմամբ (. . .):

VII. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

55. Պատգամավորի մանդատի հետ անհամատեղելիության պահանջը սահմանված է ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածով, որի համաձայն՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Որպես գերակա և անմիջականորեն գործող նորմ՝ այն սահմանում է պատգամավորի վարքագծի ամենահիմնական և առաջնային կանոններից մեկը՝ արգելք այլ պաշտոն զբաղեցնելու, այդ թվում առևտրային կազմակերպությունում, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:
Սահմանադրության 98-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհամատեղելիության պահանջի խախտումը հիմք է պատգամավորի լիազորությունները դադարեցնելու համար:

Հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կառավարման, այլ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու, այլ կերպ առևտրային կազմակերպությունում ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելու արգելքից բացառություններ օրենսդրությամբ սահմանված չեն, ինչը ենթադրում է, որ նման արգելքը բացարձակ է: Ազգային ժողով կանոնակարգ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ պատգամավորի պարտականությունն է ապահովել պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների կատարումը:

Օրենսդրության նման կարգավորումներից բխում է, որ անձը պետք է զերծ մնա հնարավոր այնպիսի բոլոր գործողություններից, որոնք կարող են որակվել և ձևավորել այնպիսի վարքագիծ, որ պետական պաշտոնին զուգահեռ անձն իր մասնակցությունն ու ազդեցությունը պահպանել է այլ պաշտոնում, մասնակցել է կամ այլ կերպ ներգրավվել է առևտրային կազմակերպության կողմից կայացվող որոշումներում, ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացման մեջ:

Այսինքն՝ որպես պետական պաշտոն զբաղեցնող անձ նման տեսակի գործառույթներ իրականացնելու դեպքում պաշտոնատար անձն ինքն է պատասխանատվություն կրում իր վարքագծի և դրանով պայմանավորված այն ռիսկերի համար, որոնք կարող են հետևանքներ առաջացնել:

ՀՀ Սահմանդրական դատարանը բազմիցս մեկնաբանել է հանրային իրավահարաբերությունների մասնակիցների կողմից իրենց վարքագծի հետևանքները կանխատեսելու հնարավորություններն իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ իրավական պետությունում իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները (ՍԴՈ-1488, կետ 4.3.):

Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի համաձայն (ՀՕ-172-Ն)՝ տրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից ձեռնարկատիրական գործունեության սահմանումը՝ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը, առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը կամ որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ է մտել Հանրային ծառայության մասին ՀՀ նոր օրենքը (ՀՕ-206-Ն), իսկ 2019 թվականի նոյեմբերի 20-ից նույն օրենքի 31-րդ հոդվածը, որի համաձայն՝ սահմանվել է նաև առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու դրսևորումները, մասնավորապես՝ առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը, առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը, առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

Հանձնաժողովը գտնում է, որ մոտ 17 տարի հանդիսանալով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր և մասնաբաժին ունենալով առևտրային կազմակերպություններում, գործող օրենսդրության շրջանակներում անձն իր իրավունքներն իրացնելուն և սահմանափակելուն ուղղված համապատասխան վարքագիծ դրսևորելու համար բավարար հստակ իրավական հիմքեր է ունեցել։ Բացի այդ, հավատարմագրային կառավարման և իր կառավարչական լիազորությունները հավատարմագրային կառավարչին փոխանցելու պայմանագիրը Գագիկ Ծառուկյանի և Սեդրակ Առուստամյանի միջև կնքվել է դեռևս 2017 թվականի մայիսի 20-ին։ Պայմանագրի դրույթները սպառիչ կերպով սահմանել են այն գործողությունները, որոնց առնչությամբ որոշումների կայացման լիազորությունն արդեն իսկ փոխանցված է եղել հավատարմագրային կառավարչին։ Պայմանագրի 3.2. կետի համաձայն՝ պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում Հիմնադիրը պարտավորվել է զերծ մնալ գույքի նկատմամբ ցանկացած գործողություններից, որոնց կատարումը մտնում է հավատարմագրային կառավարչի իրավասության մեջ։

Հանձնաժողովը գտնում է նաև, որ վարքագծի կանխատեսելիության հնարավորությունն առկա է եղել նաև հավատարմագրային կառավարչի կողմից իր լիազորությունները կատարելու անհնարինության առկայության դեպքում։ Մասնավորապես՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 966-րդ հոդվածի համաձայն՝ հավատարմագրային կառավարչի կողմից գույքի հավատարմագրային կառավարումն անձամբ իրականացնելու անհնարինության դեպքում հիմնադիրը կարող է հրաժարվել պայմանագրից։

Իր դիրքորոշման մեջ վարույթի մասնակիցը չի ներկայացրել այն հիմքերը և ժամկետները, որոնցով պայմանավորված ծագել է Հավատարմագրային կառավարչի կողմից իր լիազորությունների իրականացման անհնարինությունը, ինչպես նաև այնպիսի փաստեր, որ հիմնադիր ժողովին մասնակցելը, անձամբ տնօրեն նշանակելու լիազորություն իրականացնելը եղել է այն միակ ծայրահեղ միջոցը, որն անհրաժեշտ էր գործադրել այլ անձանց, պետությանը հասցվող հնարավոր վնասները կանխելու համար։

56. Որպես պետական՝ վարչական մարմնի գործունեությանը օրենքով ներկայացվող կամայականության արգելքի սկզբունքի պահպանման պայման, սույն դեպքում ևս Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ և գնահատել անհամատեղելիությանն առնչվող փաստերը օրենքի բովանդակային և իրավունքի (պաշտոնատար անձի դեպքում՝ իրավասության) էության տեսանկյունից։ Նման մոտեցման պարագայում հարկ է անդրադառնալ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց և մասնավորապես ընտրովի մարմինների, այդ թվում՝ Ազգային ժողովի պատգամավորների անհամատեղելիության կանոնի պահանջներին, դրա հիմնական նպատակներին, ներպետական օրենսդրությանը, ինչպես նաև գործող միջազգային չափանիշներին և առկա փաստերը գնահատել այդ լույսի ներքո։

2020 թվականի մարտի 6-ին Հայկ Մարությանի կողմից «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ» կայացրած թիվ 06/2019 եզրակացությամբ Հանձնաժողովը որդեգրել է այն մոտեցումը, որ ներկայացված փաստերի հիմքով անհամատեղելիության առկայություն գնահատելու համար

անհրաժեշտ է փաստերը և դրանց վերաբերելի իրավակարգավորումները վերլուծել օրենքի ձևական և բովանդակային տեսանկյունից, որպեսզի պահպանվի կիրառվող օրենքի և դրա կողմից հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը: Հայկ Մարությանի առերևույթ անհամատեղելիության վերաբերյալ կայացրած եզրակացության մեջ Հանձնաժողովը գնահատել է ոչ միայն ստորագրության փաստն ինքնին, այլ այդ ստորագրության արդյունքում տեղի ունեցած գործողության էությունը և թե որքանով է այդ գործողությունը համահունչ անհամատեղելիության պահանջի էության հետ: Այդ վարույթի շրջանակներում Հանձնաժողովը պարզել էր, որ Հայկ Մարությանի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները փաստացի գործունեություն չեն ծավալել դեռևս 2009 թվականից և 2013 թվականից՝ մինչև վերջինիս կողմից հանրային պաշտոնի անցնելը: Հայկ Մարությանը դիմում է ներկայացրել փաստացի գործունեություն չիրականացնող առևտրային կազմակերպությունը de jure դադարեցնելու համար:

Սույն վարույթի շրջանակներում հետազոտված փաստերի և գործողությունների բնույթը տարբերվում է թիվ 06/2019 եզրակացության մեջ վկայակոչված փաստերից:

Սույն վարույթի շրջանակներում վարույթի մասնակցի կողմից իրականացվել են փաստացի առևտրային ընկերությանն առնչվող այնպիսի գործողություններ, որոնց կատարման լիազորությունն արդեն իսկ պատվիրակված է եղել հավատարմագրային կառավարչին: Այլ կերպ՝ այդ գործողությունների կառավարչական բնույթն արդեն իսկ սահմանվել է կողմերի միջև կնքված՝ բաժնետոմսերի և բաժնեմասերի հավատարմագրային կառավարման պայմանագրով, այն է՝ ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամ դադարեցումը, և այլն: Վարույթի մասնակիցը չի անդրադարձել հավատարմագրային կառավարչի կողմից գույքի հավատարմագրային կառավարումն անձամբ իրականացնելու անհնարինության պատճառներին, չի պարզաբանել, թե երբ է անհնարինությունն առաջացել և թե այդ անհնարինության պարագայում ինչպես է փաստացի կառավարվել գույքը, ինչ այլընտրանքային գործողություններ են ծագել այդ անհնարինությունը չեզոքացնելու, կամ նոր կառավարիչ նշանակելու համար: Մինչդեռ, հետազոտված փաստերը ցույց են տալիս, որ փաստացի պաշտոնատար անձի կողմից են իրականացվել հավատարմագրային կառավարչի իրավասության ներքո գտնվող գործողությունները, մասնավորպես՝ 2020 թվականի հունիսի 23-ին, 2020 թվականի հուլիսի 2-ին առևտրային ընկերությունների ընդհանուր ժողովին որպես նախագահ մասնակցելով, ստորագրելով արձանագրությունը: Հանձնաժողովն արձանագրել է, որ նման վարքագիծ դրսևորվել է նաև նշված փաստերին նախորդող ժամանակահատվածում: Նման հանգամանքների համակցությունը անձի գործողություններում որոշակի հետագիծ է ձևավորում, ինչը Հանձնաժողովի մոտ այն համոզմունքն է առաջացնում, որ վարույթի մասնակիցը բավարար և սպառիչ ջանքեր չի ներդրել իր մասնակցությամբ ընկերություններում իր կողմից ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացումը կանխելու համար:

Վերը նշված փաստերի և Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում վերհանված՝ առևտրային կազմակերպությունների կառավարչական գործառույթներին մասնակցելու վերաբերյալ տեղեկությունների համակցությունը Հանձնաժողովի մոտ ձևավորում է այն համոզմունքը, որ բացի օրենքի ձևական խախտումից, առկա է նաև անհամատեղելիության պահանջների բովանդակային խախտում։

Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա բոլոր փաստերը, ինչպես նաև վարույթի շրջանակներում պարզված տեղեկությունների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Գագիկ Ծառուկյանի կողմից խախտվել են Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին, 4-րդ կետերի պահանջները։

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ	ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԿՈՂՄ	ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ
ԿՈՂՄ	ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ԿՈՂՄ	ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՎԱՐՈՒՅԹԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍՈՎ

Անհամատեղելիության պահանջի վերաբերյալ վարույթի շրջանակներում, ի հավելումն Հանձնաժողովի կողմից գնահատված հանգամանքների և տեղեկությունների, կարծում եմ անհրաժեշտ է դիտարկել նաև հետևյալը.

- անհամատեղելիության պահանջի էությունը և դրա ռիսկայնությունը կոնկրետ միջավայրում և Հայաստանի Հանրապետությունում ծավալվող իրադարձությունների համատեքստում,
- սուբյեկտը և նրան առնչվող այնպիսի տեղեկությունները, որոնց գնահատման հիման վրա հնարավոր կլինի պատկերացում կազմել ընդհանուր գործունեության և վարքագծի վերաբերյալ,
- դրսևորած վարքագծի էությունը՝ հաճախականությունը, այն հարցերի շրջանակը, որոնք լուծում են ստացել կոնկրետ պաշտոնատար անձի միջամտությամբ։

1. Հայաստանում կոռուպցիայի գերիշխող տեսակները սահմանելիս՝ ՀՀ Կառավարությունն անդրադարձել է քաղաքական կոռուպցիային՝ սահմանելով, որ քաղաքական կոռուպցիայի պարագայում կոռուպցիոն գործարքն ուղղված է օրենսդրական կամ կարգավորիչ նորմերի փոփոխությանը՝ մասնավոր անձի կամ խմբի շահերին համապատասխան, և հանրային քաղաքականությունը ծառայեցնում է մասնավոր շահերին, որը հանգեցնում է մրցակցության միջավայրի և քաղաքացիական հասարակության կայացման խաթարմանը։ Որպես քաղաքական կոռուպցիայի սուբյեկտ հանդես են գալիս քաղաքական ազդեցություն ունեցող, մասնավորապես, քաղաքական որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք։ Քաղաքական կոռուպցիայի դրսևորումների հետևանքով տնտեսական մրցակցության խոցելի միջավայրը շարունակաբար խոչընդոտում է Հայաստանի հետագա տնտեսական զարգացմանը (ՀՀ Կառավարության 8 հոկտեմբերի 2009 թվականի N 1272-Ն որոշում, Հավելված 1, կետ 16, 20, 21)։

Նման միջավայրում հովանավորչական խմբերի մաս կազմող անձանց և նրանց առնչվող կազմակերպությունների բիզնես գործունեությունը թեև ֆորմալ առումով ենթակա է հարկման, սակայն փաստացի նրանց իրական եկամուտը հիմնականում թաքցվում է։ Փոխարենը, բարեգործության անվան տակ այդ գումարները օգտագործվում են կոնկրետ քաղաքական խմբի համար առավելություն ձևավորելու համար։ Նման ազդեցությունն հիմնականում ուժգնանում է ընտրական գործընթացների ժամանակահատվածում, երբ գործարար ազդեցությունն ու ռեսուրսներն օգտագործվում են քաղաքական ազդեցության վերարտադրման համար (Linnaeus University Dissertations No 313/2018)։

Անհամատեղելիության պահանջների կիրառման վերաբերյալ միջազգային փորձը ցույց է տալիս, որ շատ երկրներում պատգամավորի մանդատի հետ համատեղ այլ գործունեությամբ զբաղվելու արգելքի համար հիմնական կանխարգելիչ դերն իրականացնում է քաղաքական-իրավական մշակույթը։ Կանոնները, որոնք մի հասարակությունում սահմանում են քաղաքական պաշտոնի և բիզնես

գործունեության անթույլատրելիությունը՝ որպես հնարավոր կոռուպցիոն վարքագծի դրսևորում, կարող են սահմանված չլինել մեկ այլ հասարակությունում, սակայն քաղաքական-իրավական մշակույթի ուժով որպես վարքագիծ անընդունելի և անթույլատրելի համարվեն։
Ըստ էության, անկախ իրավական կանոնակարգումների առկայության, նման կանոնների պահպանումը ընտրովի մարմինների համար հանդիսանում է քաղաքական պատասխանատվության բաղկացուցիչ (CDL-AD(2012)027rev)։

Հայաստանի Հանրապետությունում պատգամավորի մանդատի հետ անհամատեղելիության պահանջը, այդ թվում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը, սահմանվել է Սահմանադրությամբ դեռևս 2005 թվականից, իսկ այնուհետև 2011 թվականից ուժի մեջ մտած Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի համաձայն՝ սահմանվել է հանրային ծառայողների կողմից ձեռնարկատիրական գործունեությունը։ Կարծում եմ, որ Սահմանադրական նման դրույթն արտահայտում է անհամատեղելիության պահանջի էությունը՝ ապահովել իշխանությունների տարանջատման և հավասարկշռման սկզբունքի պահպանումը, կանխել պետական պաշտոնից բխող պարտականությունների իրականացման վրա հնարավոր ազդեցությունները, քաղաքականության և բիզնեսի սերտաճումն ու հովանավորչությունը։

Սույն վարույթի շրջանակներում անձի գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ, թեև ձևական առումով՝ հավատարմագրային կառավարման հանձնելով առևտրային կազմակերպություններում իր բաժնեմասնակցությունը, օրենքի պահանջը պահպանվել է, այնուամենայնիվ, ընդհանուր գործունեությամբ պայմանավորված, խաթարվել է անհամատեղելիության պահանջի բուն էությունը։

Այսպես.

2. Գագիկ Կոլյայի Ծառուկյանը ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր է դարձել 2003 թվականից և հաջորդող խորհրդարանական բոլոր ընտրություններում վերընտրվել է։ 2007 թվականի մայիսի 12-ին Ազգային ժողովի ընտրություններում «Բարգավաճ Հայաստանը» ստացել է 26 մանդատ (ներառյալ Գագիկ Ծառուկյանի ստացած մանդատը) և հանդես է եկել որպես խորհրդարանական ընդդիմություն։

2012 թվականի մայիսի 6-ին Ազգային ժողովի ընտրություններում «Բարգավաճ Հայաստանը» ստացել է 33 մանդատ (ներառյալ Գագիկ Ծառուկյանի ստացած մանդատը)։

2003 թվականին հիմնադրել է «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը և հանդիսանում է հոգաբարձուների խորհրդի նախագահ։ Հիմնադրամի գործունեության հիմնական միջոցները գոյացել են Գագիկ Ծառուկյանի և նրա բաժնեմասանկցությամբ ընկերությունների հատկացումներից։

2015 թվականի փետրվարի 5-ին Գագիկ Ծառուկյանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Ոչ իշխանական քաղաքական և հասարակական ուժերի խորհրդաժողով», որտեղ ելույթով հանդես է եկել Գագիկ Ծառուկյանը։ Նա նշել է, որ առաջիկայում կազմակերպելու են հանրահավաքներ մարզերում և խոշոր հանրահավաք մայրաքաղաքում։ Հավաքների հիմնական նպատակը գործող իշխանության

պատասխանատվության բերելն է, մինչև նոր ընտրությունների արդյունքում կձևավորվի նոր իշխանություն։

2015 թվականի փետրվարի 12-ին Գագիկ Ծառուկյանի ելույթին հետևել է այդ ժամանակ գործող Հայաստանի Հանրապետական Կուսակցության խորհրդի նիստը, որի ընթացքում Հայաստանի Հանրապետության նախագահ, Հայաստանի Հանրապետական Կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի հասցեին կոշտ քննադատությամբ է հանդես եկել և հրապարակայնորեն հորդորել է գործող վարչապետին ստուգել, ըստ օդում կախված լուրերի, միլիարդավոր դրամների չմուծված հարկերի վերաբերյալ տեղեկությունները։
Նախագահի հորդորով, վարչապետի հանձնարարությամբ ստուգումներ են սկսվել Գագիկ Ծառուկյանին պատկանող (նրա բաժնեմասնակցությամբ) ընկերություններում։
2015 թվականի փետրվարի 17-ին տեղի է ունեցել Ծառուկյան-Սարգսյան հանդիպումը, իսկ 2020 թվականի մարտի 5-ին Գագիկ Ծառուկյանը հայտարարել է, որ դուրս է գալիս «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահի պաշտոնից, բայց մնում է ԱԺ պատգամավոր և հեռանում ակտիվ քաղաքականությունից։
2015 թվականի նոյեմբերի 2-ին Ֆինանսների նախարարությունը հայտարարել է, որ Գագիկ Ծառուկյանին պատկանող ձեռնարկություններում կատարված ստուգումների արդյունքում խոշոր չափերի խախտումներ չի հայտնաբերել։
2017 թվականի հունվարի 17-ին Գագիկ Ծառուկյանը հրապարակային հայտարարությամբ տեղեկացրել է քաղաքականություն վերադառնալու մասին և մասնակցել 2017 ապրիլի 2-ի Ազգային Ժողովի ընտրություններին։ «Ծառուկյան» խմբակցությունն Ազգային ժողովում ստացել է 31 մանդատ (ներառյալ Գագիկ Ծառուկյանի ստացած մանդատը)[2]։
2018թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հուշագիր է ստորագրել Գագիկ Ծառուկյանի հետ՝ 2018թ. դեկտեմբերին Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ։
2018 թվականի Ազգային ժողովի ընտրությունների արդյունքում «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը ստացել է 24 մանդատ (ներառյալ Գագիկ Ծառուկյանի ստացած մանդատը)։
2003 թվականի որպես պատգամավոր պաշտոն ստանձնելու դրությամբ Գագիկ Ծառուկյանը բաժնեմասնակցություն է ունեցել 5 առևտրային

[2] ԵԱՀԿ/ԺՄԻԳ դիտորդության արդյունքներով՝ ընտրությունների ժամանակ ընդհանուր առմամբ հիմնարար ազատությունները պահպանվել էին։ Այնուամենայնիվ, ըստ ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի՝ ընտրակաշառքի, ընտրողների նկատմամբ ճնշումների և ահաբեկումների մասին լայնատարած հաղորդումները, միասին վերցված, բացասաբար անդրադարձան քարոզարշավի վրա՝ նպաստելով ընտրական գործընթացի նկատմամբ հանրային ցածր վստահության խորացմանը։ Ողջ երկրի տարածքում եղան որոշ կուսակցությունների օգտին ընտրակաշառք բաժանելու դեպքերի մասին համատարած պնդումներ, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն բազմաթիվ արժանահավատ հաղորդումներ ստացավ անմիջապես ընտրողներից[2]։ Օրինակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արժանահավատ հաղորդումներ էր ստացել, որ Սյունիքի մարզպետը բոնուսներ է խոստացել ԶՊՄԿ հանքարդյունաբերական ընկերության աշխատակիցներին ՀՀԿ-ի օգտին քվեարկելու համար, որ ՀՀԿ-ն դրամ է առաջարկել դասատուներին Կոտայքի և Սյունիքի մարզերում, և որ Ծառուկյանը դրամ է առաջարկել ընտրողներին Սյունիքում։ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն բազմաթիվ հաղորդումներ է ստացել անմիջապես մարզերում գտնվող մարդկանցից, որ նրանք վճար էին ակնկալում իրենց ձայնի դիմաց-2017թ.-ի ԱՊՐԻԼԻ 2 ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն Վերջնական զեկույց էջ 18, https://www.osce.org/files/f/documents/6/3/333491.pdf

կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում: 2019 թվականի տարեկան հայտարարագրում այդ կազմակերպությունների թիվը 54-ն է, այսինքն՝ ավելի քան տասն անգամ աճել է (հաշվարկը չի ներառում գնման և օտարման գործարքների թիվը):
2011-2019 թվականների համար այդ կազմակերպություններից որպես եկամուտ Գագիկ Ծառուկյանը ստացել է շահաբաժին՝ 23,908,477,109 ՀՀ դրամի չափով:
2019 թվականին Գագիկ Ծառուկյանի և ընտանիքի անդամ(ների) մասնակցությամբ կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության հետ կնքված պայմանագրի արդյունքում մատուցված ծառայությունների համար փաստացի ստացել են 639,025,978 ՀՀ դրամ:
2012-2020 թվականներին պատգամավորական մանդատից բխող հիմնական գործառույթից՝ քվեարկություններից մոտ 82% դեպքում բացակայել է:
Նշված փաստերը, կարծում եմ, վկայում են, որ անձի գործունեության մեջ գերակշռում է առևտրային կազմակերպություններում մասնակցությունը, և այդ մասնակցությունն ազդեցություն է ունեցել պատգամավորական մանդատից բխող գործունեության վրա՝ անտեսելով անհամատեղելիության պահանջի հիմնական նպատակը:
Ավելին՝ նշված փաստերը վկայում են նաև, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կոռուպցիայի՝ որպես ռիսկի, առկայությունն արձանագրվել է, երբ անձն արդեն ստանձնած է եղել քաղաքական պաշտոն և միաժամանակ բաժնեմասնակցություն է ունեցել տարբեր առևտրային կազմակերպություններում: Հետևաբար, կարծում եմ, 17 տարի առևտրային կազմակերպությունում նման ծավալով մասնակցության և պատգամավորական գործունեության համատեղելիության փաստը գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում արդեն իսկ անթույլատրելի է եղել: Նման վարքագծի նկատմամբ ձևավորված հանդուրժողականությունը հանգեցերել այն բանին, որ առանձին գործողություններ՝ տնօրենի նշանակում տնօրենի ազատում, տնօրենի աշխատավարձի փոփոխություն, առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխություն, առևտրային կազմակերպության ընդհանուր ժողովին նախագահի կարգավիճակով մասնակցություն և այլն, անձի կողմից ընկալվել են որպես իր պատգամավորական մանդատի հետ համատեղելի, թույլատրելի վարքագիծ: Փաստացի, թեև ամատեղելիության պայմանների կատարման համար անձն իր իրավունքներն իրացնելուն և սահմանափակելուն ուղղված համապատասխան վարքագիծ դրսևորելու համար բավարար հստակ օրենսդրական հիմքեր է ունեցել, սակայն դրանց կատարումը չի ապահովել:

3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հիմնական մանդատը կոռուպցիայի կանխարգելումն է, ինչն իր էությամբ էականորեն տարբերվում է պատժողական գործառույթ ունեցող մարմնի գործունեությունից:

Կանխարգելիչ գործառույթի տեսանկյունից, կարծում եմ, կարևորվում է ոչ միայն օրենքի ձևական պահանջների կատարման պահպանումը, այլ այն երևույթներն ու վարքագծի դրսևորումների գնահատումը, որոնք թեև անձի նկատմամբ պատասխանատվություն կիրառելիս չեն կարող օգտագործվել

որպես ապացույց, այնուամենայնիվ, դրանց արձանագրումը կարևոր է անձի վարքագծի հետագիծը տեսանելի դարձնելու համար։
Վարույթի շրջանակներում ձեռք բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ վարքագիծը ոչ թե եզակի բնույթ է կրել և պայմանավորված է եղել գործառույթի իրականացման անհնարինությամբ, ինչը ներկայացրել է վարույթի մասնակիցը, այլ ունեցել է որոշակի ***պարբերականություն և կրկնություն***։ Վարույթի շրջանակներում Հանձնաժողովին հասանելի են դարձել տեղեկություններ և տվյալներ, որոնք վկայել են, որ թվագրվում են ավելի վաղ՝ 2020 թվականին նախորդող ժամանակահատվածին։
Հետազոտված փաստերը վկայել են նաև, որ նման գործողություններ իրականացվել են նաև 2017 թվականին, 2018 թվականին։ Մասնավորապես՝ դիմումատուն նշել է, որ 2018 թվականի հունվարի 16-ին «ԿՈՏԱՅՔ» գարեջրի գործարան ՍՊ ընկերության մասնակցի որոշմամբ փոխվել է ընկերության կանոնադրությունը, որը ստորագրել է Գագիկ Ծառուկյանը։ Դրանից հետո 2020 թվականի փետրվարին կնքել է աշխատանքային պայմանագրի փոփոխություններ, այն դեպքում, երբ հավատարմագրային կառավարչի լիազորությունների իրականացման մասով անհնարինություն առկա չի եղել։ Նման փաստերի հիման վրա անձի վարքագծի մասին պատկերացում ձևավորելու համար Հանձնաժողովը չի կարող կաշկանդվածություն ունենալ։ Առավել ևս, երբ պատգամավորի մանդատի հետ անհամատեղելիության սահմանադրական պահանջը, սահմանված է եղել դեռևս 2005 թվականից։ Այստեղ կարևոր է վերստին հաշվի առնել, որ պատգամավորի նկատմամբ գործունեության անհամատեղելիության պահանջն ավելի խիստ է։ Բացի այդ, նման խախտումների անտեսումները նպաստում են դրանց կրկնությանը, օժանդակում են քաղաքական կոռուպցիայի զարգացմանը՝ խոչընդոտելով երկրի հետագա տնտեսական զարգացմանը։

Բացի այդ, նման երևույթների և վարքագծի արձանագրումը խիստ կարևոր է կոռուպցիոն ռիսկեր պարունակող երևույթները տեսանելի դարձնելու, ինչպես նաև դրսևորումների տարածմանը նպաստող հնարավոր միտումները կանխելու համար։
Այս տեսնակյունից կարևորում եմ Հանձնաժողովի կողմից նման երևույթները տեսանելի դարձնելը, որպեսզի ձևավորվի նաև դրանց նկատմամբ հանրային անհանդուրժողականություն և հանրային շահի պաշտպանության համար մանդատ ստացած անձանց ահամատեղելիության պահանջների կատարման պահպանման պահանջատիրություն։

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ